

1843 ԲԱԶՄԱՎԵՊ 1910

* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ *

ՀԱՅՈՐ
ԿԸ
Մ. - Տ.
Թ. 5-6

ԱՐԱՄԱՆ - ԲԱՀԱԱՐԱՐԱՆ - ՊՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏԵՔՐԱՎԱՐ
Ժ Ժ Ժ Ժ ԱՍԱՄԱՐԵՐ Ժ Ժ Ժ Ժ Ժ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՀՆԱԽՈՍԱԿԱՆ

Ժ. Ա. Մ. Ա. Հ. Ա. Ր. Ե. Ի. Զ. Ա. Ն. Գ. Ա. Կ.

Քրիստոնէութիւնը, մարտիրոսաց այդ կրօնը, իւր հաւաքոյթներն ու սրբազն պաշտամունքը սկսաւ ծածուկ վերնատանց ու մթին գետնագամբանաց կամ այրերու մէջ, Այդ ժամանակ անհրաժեշտ էր թարութիւնը. և սարկաւագ մը պաշտօն ունէր շրջիւ ու կոչել հաւատացեալներն ի ժողովարան, ինչպէս կ'աւանդէ Ա. Խինասահոս (առ Պողիկարպոս): Առաջին դարերու ժամանուն էր այն, խաչին յաղթանակն՝ աղօթավայրեր փոխադրեց քաղաքաց սրտին մէջ, ու ձեռնարկեց զանգակի հանդիսական ձայնով կոչել ժողովուրդն ի պաշտօն: - Արեւմտեան եկեղեցւոյն մէջ հազիւ Զ դարու վերջներ կը սկսի յիշուիլ զանգակի գործածութիւնը և Յունաց մէջ Թ դարուն: Բայց վերջնոց բով կը կանխէ կոչնակը, որ կը ձեւանար երկու շեր-

տերէ, զորս իրարու կը բախէին ^{3:}: Մեր քով ալ նոյնպէս կրկին էին յեկեղեցի կոչելու գործիները. ժամանարը կամ կոչնակը, որ հնագոյն էր, և զանգակը: Պիտի տեսնենց զանանց առանձնարար:

• *

Ժ. Ա. Մ. Ա. Հ. Ա. Ր.

1. - Կոյունն: — Ամենէն սովորական հնագոյն անունն էր ժամանար, ինչպէս գործածուած կը գտնենց երէց ու կրտսեր մատենագրաց քով միանգամբան, որպիսիք են ՅՀ. Մամիկոնեան, ՅՀ. Խմաստաւէր, Նարեկացին, Ասողիկ, Լաստիվերացին, Շնորհալին, Գր. Ցղայ և Այլը, ու եկեղեցւոյ պաշտօնական մատեանն ինքնին՝ Մաշտոց: Ինչպէս կը տեսնենց՝ բարդ բառ մ'է այդ, ժամ և հար արմատներէ, և կը նշանակէ հարկանող կամ կոչող ի «ժամ» ^{3:}, որ եկեղեցական լեզով մէջ ունէր պէսպէս մտքեր. զոր օրինակ՝ ժամբգութեան, պատարագի, և այն տեղոյն

1. Martigny, Dict. des Antiq. Chrét. - Clauche.
2. Goschler, Dictionnaire encyclopédique de la Théol. Cath. - Clauches.

3. Համաձայն «Հարկանէ ժամ» բացարարթեան՝ զոր զանձ եմ վանաց մէկ մաշտոցին մէջ 1216ին գրաւած (կան. ժմէր, օրէ.):

որ աստիք կը կատարուէին, որ է եկիւ տոցը՝ միլ դարուն՝ կու տայ անոր ուրիշ զեցին։ Ժամանակ Կոչումն այդ երեց իւմաստն ալ կարող է բովանդակել. անոր համար դիւրին չէ ճշգել բուն միտքը, որ գուցէ երեքն ալ է միանգամայն ։ Շնորհալին գործածած է նաեւ փայտածամանոր բարոր (Խրատք ժմտղ.), Եւ աւելի վերջ վանական վրդ. սամկական ձայնով ըստ է իշխան՝ երկու անգամ (Հարցմունք)։

2. — Խաղաքն ու տեղորիսն։ — Անոր հնագոյն յիշատակութիւնը գտած եմ ի զարուն, վերյոշեալ ՅՀ. Մամիկոնեան եպիսկոպոսին քով (Պտմ. 50), և ապա յաջորդաց։ Ի զարուն յիշատակութիւնը չի նշանակեր նոյն ժամանակ հնարուիլը, այլ արդէն զոյտիքն ունենալը։ Բայց թէ ո՞ր թուականէն, կարելի է ենթադրել քան հաստատել, ինչպէս պիտի տեսնենք աւելի վար։ Որհնովիմարեր Ցուցակը, և շատ հաւանօրէն անկից առնլով կիրակու ալ (Էջ 20), Մանգակունւոյն Կ'ընծային ժամանակի օրհնովիւնը։ Եթէ յիշեալ Ցուցակը կեղակարծ զրութիւն մը չլինէր, ինչպէս համոզուած եմ ես՝ նկատելով իւր անճշգործիւնըը, այն ժամանակ կոչնակն արդէն մինչև Ե դար Կ'ենէր աներիքյապէս։ — Ստուգագոյն է սակայն տեսողութիւնը. Վանական վրդ. որ կը յիշէ զայն՝ ժի՞ զարուն Կ'ապրէր։ 1397 թուին, ուր Գր. Տաթեւացին Հարցմանց զիրքը կը շարադրէր, զեռ կը տեսնէր զայն, ինչպէս մեր ալ մինչեւ մեր օրերը։ Գրչ. մաշտցներն ամէն ժամանակ անպակաս ունին անոր օրհնովիեան կանոնը։ Ի՞չ ապաքին ապացոյց է այս անոր անընդհատ պահպանութեան մինչեւ վերջ։

3. — Զերի։ — Նարեկացին կը սահմանէ զայն՝ «չերտա այս» (Ալթ. Ղ.Դ, զ)։ Նմանապէս 1821ին ի Տաթեւ զրուած մաշտցի մը յիշատակարանը կը կոչէ զայն «ի չերտաց» (Հնդ. ամս. 1905, էջ 314)։ Ո՞վ չէ կարող երեւակայել շերտէն մերձաւրապէս՝ երկայն նեղ ու տափարակ տախտակ մը։

Մեր մատենադարանին հնագոյն մաշ-

տոցը՝ միլ դարուն՝ կու տայ անոր ուրիշ մէկ մանրամասնութիւնն՝ օրինութեան կանոնին մէջ. «զչորեսին ծոկու», զոր կը կրկնէ 1216ի օրինակն ալ։ Զատոնը լարեն անցնելու ծակերը պիտի կարծէինք, եթէ աւելի նորագոյն օրինակներ չգային պղտորել մեր միտքը։ Այսպիսի է 1338ի գրչագիրը, որ զայդ կը կարդայ յաւելուածով ու փոփխմամբ՝ այսպէս. «զչորեսին անկիւնն և զմագն»։ ուրիշ մը՝ 1500ին՝ կը զրէ, «զչորեսին ծագսի»։ վերջապէս 1387, 1436 և 1464 տարիներու օրինակները թողլով այս տարակուսական բարը նարու, կը պահեն լոկ 1338ի յաւելած համանիշը, «զչորեսին անկիւնն»։ Ուրեմն հաւանօրէն հնագոյն օրինակաց «ծակն» սիրալ է, և կամ չըորդարար կ զրուած փոխան գ տառին։ Ինչ որ սակայն կը հետեւի սոյն համեմատութիւնն, այս է որ ժամանակը նաեւ ճիշդ քառակուսի էր, ունենալով չորս անկիւններ։ «Տաշեցիալ» Կ'ըսէ նարեկացին (Ղ.Դ, զ), ցուցնելով միանգամայն անոր ողորկութիւնը։

Աւելին կայ, նոյն վարդապեսի ուրիշ բացատրութեան մը մէջ կը կարծեմ տեսնել իսաչին ձեւը քանդակուած կոչնակին մէկ ծայրը, առաւել սրբազն նկարագիր մը տալու համար անոր, «Զայս ծառ սարեկայ (ժամանակը), Կ'ըսէ, որ ունի կախեալ (այս ինքն գծեալ կամ ազուցուած) ի դիտակ սուսոցն (այն է ծայրը՝) զաւանդ սուրբ նորոգ այժմու փրկութեանս ծազկեալ քեւ, Քրիստոս, (որ է իսաչը), ի պտուզ կենաց անմահականաց» (Ղ.Դ, ր)։ Դիտելի է՝ որ նոյն տէրունական նշանը կար նաեւ զանգակին վրայ, ինչպէս պիտի տեսնենք։

Այս նկարագիրը կը լրանայ ամբանաշեօք, ինչպէս կը կոչուէին ժամանակին (նաեւ բուրուառին) լարերը, որոցմով կը կախուէր յատուկ տեղէն։ Դարձեալ նարեկացին է զայս յիշողը, նմանեցնելով կոչնակն Հըմէց տապանակին, և չուաններն՝ անոր լծակաց. «Բարձ յինէն, կեցուցիչ, զվտանգ պարտեաց» պանծալի

լծակօց ամբանակիաց նոր տապանակիդ» (Ղ.Դ. Ժ.)։ Եթէ վերոյիշեալ «զզորեսին ծակարն» ուղղի լինէր, չըս եւս լար պիտի ենթաքրէինք անոնց, իսկ հակառակ պարագային կարող ենք երկու կարծել, հետեւ ցնելով թշնակին տապանակին լը- ծակաց լուէն (Ելք, ԱՅ, 15)։

ժամանարին լրացուցիչ մասն էր այն գործին որով կը բախէին զայն՝ հնչին հանելու համար, և զոր կ'երեւակայեմ մուրճ մը։ Ասոր ու կոչնակին կ'ակնարկէ Նարեկացին՝ երր կ'ըսէ. «յընդուստ զարկուած երկոց միներդաց» (Ղ.Դ, թ), որ Նարեկի լուծան մէջ կը մեկնուի այսպէս. «Երկոց միջնորդաց, ժամանարին և րուկապիկին»։ Եւ Նարեկի ուրիշ մէկ տեղին՝ «կրիմնամիր նշանաւս» (Ղ.Դ, հ), կը մեկնուի՝ «երկու նշանաւս բաղադրակին» և փայտին։ Այսաւասիկ դասական յատուկ կոչումը, զոր կը յիշատակէ նաեւ Գրիգոր Տղայ. «Զժամանար փայտն այրեցին – Եւ գրակաղացն կորուսին» (Ողբէ Երրուս.), նոյնը գտած եմ վանաց 1500ի մաշտոցին մէջ ալ այսպէս. «Առնու գրակաղացն և կոփէ երիցս» (Կան. Ժմզն. օրէ.)։ Այս բառն՝ ինչպէս կը տեսնենք՝ սակաւածանօթութեան պատճառաւ զըշաց ձեռքը բաւական չարչարուեր է. իւր ուղիղ ժեւն է ըստ իս «թակաղազ²», բաց ի Դր. Տղայէն՝ գործածուած նաեւ Անանիա մոկացի կաթողիկոսէն (Պտճ. զիսր. նը- զով.), և Ե զարուն՝ Ազաթանգեղոսէ տարրեր իմաստով (ՃԲ), Բնիդ հակառակն վերջնոյս բով՝ Լուսաւորչի տեսլեան մէջ կայ հրեշտակ մը, և «ի ձեռին իւրում ուսն մի մեծ ուկի», որով բախեց գետինը և դրնդին հանեց (անդ): Դիտել կու տամ՝ թէ ինչ որ կը յիշուին հոն, խարիսխ, սիւն, խաչ և այլն, մասունք կամ սպասը են եկեղեցւոյ. կարելի չէ՞ ուրեմն «ուռե» ալ

ժամանարի մուրճն իմանալ, երբ այդ տեղ պաշտօն ունի բախելու և մայն հանելու. և որ հետեւարար կոչնակի գործածութիւնը պիտի տանի մինչեւ Ե դար:

4. – Նիւրլի։ – Այն զրեթէ բոլոր վկայութեանց մէջ՝ զոր ի ձեռին ունիմ, փայտը կը յիշուի միշտ իրքեւ նիւթ ժամանարին Ասոր ճոխագոյն վկայողն է Նարեկացին։ Կ'իմացնէ նա՝ թէ պղնձի չէ նման զանգակին։ «ոչ զանգակ նիւթոյ պղնձոյ զանդաշեցուցեալ» (Ղ.Դ, թ). այլ կը կոչէ զայն «փայտ հրաւիրման» (Ղ.Դ, ա): Կ'ըսէ զարձեալ՝ թէ արթնացանք՝ «Հանդարտ գործեալ վայելչականս փայտ անօթոյ» (Ղ.Դ, թ). և թէ «նուիրեալ փայտիւն զնշարտութիւնն քարոզեցեր» (Ղ.Դ, զ)։ Շնորհալին՝ անուան մէջ կը հասկացնէ նիւթն ալ, կոչելով կոչնակը «փայտամանար» (Խրտ. Ժմող.), և Գրիգոր Տղայ՝ «զժամանար փայտն»։ Աղոնց հետ կը միաբանի Մաշտոցն ալ, իննորելով Ա. Հոգուոյն շնորհին «ի փայտս յայս», համաձայն բոլոր զրչագրաց, սկսելով ԺԱ դարու օրինակէն։

Ենուում մը կարելի է համարիլ Այս նեաց սովորութիւնը, որոնք կը գործածէին երկաթեայ կոչնակներ եւս, որպէս զի իրենց լերանց ու հովտաց մէջ լաւագոյնն ծաւալէր անոնց մայնը. Գր. Տաթեւացին է զայն յիշատակողը. ունինք «մնց, կ'ըսէ, ժամանարս յերկարոյ և ի փայտէ» (Քրզ. Ճմր., 8). ուրիշ տեղ մը մովսիսահրաման կրկին փողերուն հետ կը համեմատէ «ըզգանկակն և զժամանարն, կամ (երկրորդին կրկին տեսակներն) զփայտէն և զերկարին» (ՃԲ. Թ, իւ): Իրեն հետ կը միաբանի Տաթեւոյ վերոյիշեալ 1321ի մաշտոցին յիշատակարանն ալ, ըսելով այսպէս. «Այ (մաշտոցը) յերկարոյ, ի պղնձոյ և ի շերտից փայտսից՝ զերանաւէտ մայնին տայ

1. Աղուում մեր քրչագրատան 1611ի օրինակին համաստ, որը 1406ին կ'ըսէ՝ «բակաղին զանազանաթիւնը կը պահէն անոնք նաեւ հետազայ մեկնութեանց մէջ, զանազան կամամթիւնը բակաղին որ ի վերաբար փայտին»։ – «Զկատել զիսուածս, զկատել բակաղին ի փայտայ»։

2. Նարեկան լուծողն (օր. 1406ին) մէկնել կը թուի այդ բառն իւր համաստ ձեւին մէջ. Աթակակին, այս ինքն երգին»։ Բրեւ թէ այդ բառը բարկուած լինէր «թակ-աղազ» արմաներէ. այն է՝ կուան որ բախելով պակապէ կը հանէ.

մեզ զնշանակ», ուր պղինձը զանգակին յատուկ է, ինչպէս պիտի տեսնենք, և միւս երկուցք ժամահարին:

Գալով թակաղակին, զայն միշտ երկաթեայ կը կարծեմ, որով կարենար իւր ծանրութեամբ հնչումն յառաջ թերել. և բոլորովին պիտի համոզուիմ աղոր, եթէ Լուսառոշի տեսլեան «ուռն ոսկի» ստուգապէս լինի մուրճ:

5. — Թիւր: — Մինչդեռ նարեկացին կը ճանաչէ «երկու միջնորդ», որով մի կոչնակ և մի մուրճ, ինչպէս նաև Մաշտոցը, Գրիգոր Տղայ մի փայտին հետ կը յիշէ «զթակաղաղն», որ կ'իմացուի երկու, ոյզ ձեռներով զարնելու համար, — Ոչ այս միայն, այլ նոյն ինքն ժամահարին բազմաւորութեան հետքեր ալ պահանակ չեն: Մեր գրչազրատան մէջ Շնորհալոյն ժամատեղաց խրատէն կան երեք օրինակներ, որոց հնագոյնը՝ 1480ին՝ փակակալին զարնել կուտայ «զժամահարն»: Նոյնպէս ունի նոտրազիր անթուական օրինակ մը. մինչ երրորդ նոյնպիսի գրչազիր մը կ'ըսէ «զժամահարն»: Այս համեմատութենէն կը հետեւի՝ թէ կոչնակին ու մրճին մէկ կամ աւելի լինելը բաց և ազատութեան թողուած էր: Դարձեալ՝ մէկ փակակալը չէր կարող անշուշո մնելի աւելի կոչնակներ միանգամայն զարնել, ուստի հաւանօրէն առաւոտեան «երեք փոփ» հարուածներուն համար մերթ մին կը գործածէր, մերթ միւր:

6. — Զայր: — Երկաթեղին կոչնակին հնչինը դիւրին է երեւակայել: Բայց ինչ կրնար լինել փայտինը: Նարեկացւոյն է զայն մեզ նկարագրելու պատիւը: Ուրախ է նա, և կը յայտնէ իւր գոհութիւնը, որ փայտը իւր մեղմութեամբ կը խնայէր աղօթականին լուսէր ականջաց՝ մետղեայ գործուոյ մը խայթումները և ուղեղի ցնցումները: «Ոչ արձագանգ արձանաց ինորոց ինչ ֆանչութենէ խիստս առաջեցեալ, և ոչ գմնակապէս՝ ըստ իմաստակի ումեմն օտարի՝ զօտ վիրաւորեալ, ոչ անախորդ սրութեամբ ընդ ունկն մտեալ, և ոչ զաման ուղղոյն անկամակութեամբ չար».

Բնդեցուցեալ» (Պ.Դ, վ): Ոչ ալ մեր կարծածին պէս աննշան և արհամարհելի ծայն մ'էր: Ընդ հակառակն նարեկայ ճգնաւորը կը տեսնէր՝ թէ վանայ ծովակին ափանց վրայ զետեղուած եկեղեցեաց կոչնակներն ինչպէս կը ծաւալէին իրենց զանզիւնը մէկ եզրէն ի միւրը, ճախրելով մերթ ծիծադղուա և մերթ յուզեալ կոհակաց ու մենաւոր Աղթամարայ վրայէն, և աւելի հեռուն ալ հանելով. «Ընդ ծագս տիեզերաց և ընդ ծիրս եզրաց, ի ծոց ջուրց բազմութեան ծովաւց և կղզեաց նոցա՝ յաճախ սաստկութեամբ անարգել ճայթմամբ իմն աստուածայնով հնչեցեալ աւետարանէ» (Պ.Դ, է): Ո՛վ զիտէ ո՞ր կարծր փայտն էր այլբան հնչականութիւն ունենալու համար:

7. — (Օծումն: — Եկեղեցւոյ որ և է սպաս օրհնութիւն մը կ'ընդունէր, որպէս զի կարենար գործածուիլ. իսկ աւելի կարեւորները կ'օծուէին: Այս վերջիններէս էր կոչնակը: Նարեկացին նախ կը յիշէ զայս, կոշելով ժամահարն՝ «այս զրոշուած իսկեալ», կամ «օծեար այս փայտ», և «օրհնութեամբ յարգեալ գովհատի» (Պ.Դ, զ, թ): — (Օծման արարողութիւնը կը գըտնենք Մաշտոցին մէջ, սկսեալ ԺԱ, դարու երիցագոյն օրինակէն՝ ուսկից կ'անոնում, և որ հետեւեալն է: Նախ «լուանան ջրով և ապա զինով», ինչպէս կ'ընէին միւս օծանելի սպասներն ալ, և «Ծնջեն» կտաւով մը: Յետոյ կը տանէին զայն բեմին առջեւ, «ունին առաջի սրբոյ սեղանոյն», ուր կը պաշտէին սաղմունէր, և քահանայական օրհնութեան աղօթքը, որով կը խնդրէին «զշնորհս Հոգոյդ սրբոյ ի փայտս յայս, զի և սա մերձեսցի ի սպաս պաշտաման եկեղեցոյ ցում սրբոյ», և այլն: Այս աւարտելուն՝ «հանեն ի թեմըն՝ առաջի սրբոյ սեղանոյն», ուր մէկ կամ աւելի սարկաւագներ կը բռնէին զայն, «ունելով սարկաւագն ի վեր», կամ 1500ի օրինակին համեմատ՝ «սարկաւագն ի վեր ունելով ի վերայ բազկացն»: Այդ պահուն «քահանանայն միռնէ» (ըստ այլ օրինակաց՝ տեսպնագրէ մեռուաւն) զըորեւ-

սին ծակսն» կամ «ծաղսն» կամ «ան-կիւնան», ինչպէս տեսանք արդէն. 1887ի օրինակին համեմատ յարելով սա բանաձեւը. «Որչնասցի՝ օծիք և սրբացի ժամահարս այս յանուն Հօր և Որդոյ և Հո-գոյն սրբոյ»: Յետ որոյ նոյն օրնիչն «առնու զժամահարն (ըստ 1500ի օր. Ըլ-թակազակն) և Կոփէ (ըստ 1338ի օր. տոփէ) երիցս և տայ ցապասաւորս եկեղեցւոյն հարկանել»: Այս կոփումն՝ արարողական փորձ ու միանգամայն ժամերգութեան ազգարար նշան էր, որով «և իսկոյն ի ժամ ժտանեն», համաձայն նաեւ 1216, 1338, 1436 և 1464 տարիներու մաշտցաց, մինչ 1387ի և 1500ի օրինակները չունին այս վերջին մասը. ուսկից կը հետեւի՝ թէ ոսմանք ժամերգութեան հետ չէին կապեր օրհնութիւնը:

8. — Եղանակ հարկաներու: — Նարեկացոյ իրթնաբան՝ բայց նրանին գրչին ներքեւ կը գտնենք ասոր յիշատակութիւնը, որ սակայն կը պատկանի հարուածին վերջարանութեան: Կ'ըսէ նա՝ թէ կ'աւարտէր երեք բախմամբ. «Ծնդ երրորդութեանդ գծագրութիւն», այս ինըն՝ երրեակ հարուածով երրորդութիւնդ գծագրեցէ կամ նշանակելին զատ, «զկապն երեկին իմ վնասակարին (սատանայի) ի կատարածին (ժամահարութեան) սովիմը կրկնեցեր» (Ղ.Դ. թ.): Այս սովորութիւնը կը հաստատէ Մաշտցին վերցոյշեալ հարանգն ալ՝ թէ քահանայն «կոփէ երիցո»: և օծման պահուն կատարուած այս խորհրդաւոր՝ բախումն անշուշտ յատուկ էր ամէն առիթներու եւս:

Նոյն ուշագրութիւնը կը լինէր նաեւ ժամահարութեան թուոյն մէջ, որով ամէն ժամերգութեան սկիզբը երեք անգամ կը զարնէին կոչնակը կամ զանգակը: Զայս կը գտնենք Շնորհաւելոյն ժամատեղաց իրաւաին մէջ, որոյ համեմատ փակակալը զիշերային պաշտամունքը սկսելէ յառաջ կ'ելնէր «Հնչեցուցանել զզանկակն կամ զժամահարսն երեք փոխ»: Ճաշոյ ժամասացութեանը յառաջ ալ, կ'ըսէ, «նախ

երեք անգամ հարկանեն զզանկակն», նոյն թիւը սակայն լոելով երեկոյին: Այս սովորոյթը Խրատին մէջ միայն չմնաց, այլ ընդհանրացաւ, գոցէ յառաջազգոյն ալ ընդհանուր էր արդէն. և Շնորհալիէն երկու դար վերջ Տաթեւացին կը յիշէ տակաւին անոր գործադրութիւնն՝ ըսելով. «զ անզաւ հնչէ զանկակն ի գիշերի» (Քրզ. ձմր. 9). և թէ «ի կիրակէ գ անզամ փողն հնչէ ի գիշերի» (Հրց. Թ. իւ):

9. — Ժամանակարին պաշտօնիք: — Հատրազմակերպ էր, և հեռի մեր այժմեան խորհրդոց սահմաններէն: Առաջին և զեռցայօր տեւող պաշտօնն էր՝

Ժամերգութեան կոչել: — Զայս կը շեշտէ Ցովինան իմաստասէր, վկայողաց մէջ հնագոյնը, ըսելով՝ թէ «Խզզարարն ժամահար նախ ի փառարանութիւն Աստուծոյ է բոլորից հրաւիրակ» (էջ 139), որոյ ի լուր՝ հաւատացեալը կ'ելնէին «զիմել ի տեղի աղօթից» (նոյն, 109): Նարեկացին կ'ըսէ՝ թէ անոր ձայնը ներքին ուրախութիւն մը կ'ազդէր, և յօժարութիւն մը կը ներշնչէր հաւատացելոց՝ փութալու դէպ ի սրբավայրը. անոր հնչինէն «իբր կոչմամբ սփոփանաց բանի բերեալ՝ զգեցաք ի ժամ պաշտաման օրհնաբանութեան, յանդիման լինել բեզ ուրախութեամբ համոզէք հատուցմանս բեմի»: ասոր համար ալ զժամահարը կ'անուանէ՝ «կոչարան բարւոց հաւարման փոյթ ընթացիք ի յարկս օրհնութեան» (Ղ.Դ. գ): Այս պաշտօնն օրուան մէջ կը կատարէր զիշերային աղօթիքն յառաջ՝ երրեակ հարուածներով, և ճաշուն՝ յիտ զանգակահարութեան. իսկ երեկոյին լոկ զանգակը կը զարնուէր: Այս՝ Շնորհալոյն ժամատեղաց խրատին համեմատ բայց ըստ Տաթեւացոյն՝ ամենօրենայ գործածականն էր կոչնակը. «Մեծ խորհուրդ է, կ'ըսէ, ժամին և ժամանակարին՝ որ նախափազ նելէ յականջս մեր» (Քրզ. ձմր. 9): ուր զանգակը տօնական աւորց յատուկ էր, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Այս զանգականութիւնն երկու աղքերաց մէջ՝ անցուշտ ժամանակական կամ տեղական

փոփոխութեանց արդիւնք էր, և հետեւանք զանգակի ընդունելութեան, մինչ յառաջաւ գոյն՝ զոյութեամբ ու զործածութեամբ միապետողն էր կոչնակը:

Այս՝ զիշելային ժամերգութեան հնչելու ժամանակ պաշտօն ունէր միանգամայն արթնցնելու հաւատացեալները, ինչպէս կ'ըսէ Նարեկացին. «Այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քոյ յիշատակի ի լրութին հնչման փայտիդ հրավրման, որով բախնալ զձանարկութեանցն զազդողաբն (որ է լսելիք), սթափեցաք կանգնեցաց, ի վեր յարուցեալ ի մեռօրինակս թմրմանէ». կամ թէ անով «առ բունս անյարիր սաստիկս որոտացեր» (Ղ.Դ, ա, բ):

Սովորութին կայ այսօր բարեպաշտից մէջ ի լուր ժամանարին կամ զանգակին խաչակնել իրենց երեսը: Հնոց քով ալ կը գտնենց զադ, յիշտած նոյն ինքն Նարեկացին, կարգ և կանոն աղօթից կոչուած զրութեան մէջ. «Յորժամ, Կ'ըսէ, հոգեւոր փողն հարկանի և զու արթնանս, իսկ և իսկ կնքեա զբեզ նշանաւ խաչին, յիշելով զամենասուրք Երրորդութիւնն»: Ասոր համար ալ կոչնակը Կ'անուանէ «յիշատակ (այս ինքն յուշարաբ) մնձ՝ տեանազրութեան յերեսս կերպիս Հոգուովզ սրով զնշան խաչիդ» (Ղ.Դ, գ):

Պատարագի մէջ: — Սովորութին էր այս առթիւ ալ հնչեցնել ժամանարը. ասոր համար Նարեկացին զպատարազը Կ'անուանէ: «Պահպականի . . . զարիւնագեղ անճան խորհուրդ» (Պտմ. Ապար. թԶ), ուր «զանգակը», գես իւր օրով անսովոր, ինչպէս պիտի տեսնենց ապա, համանշարար զործածուած է փիտան կոչնակի: Թէ պատարագի ո՞ր կիտերուն կը հնչէր, միայն վերաբերութեան պահուն ծանօթ է ինձ. մին Տաթեւացւոյն վկայութենէն՝ զոր պիտի տեսնենց յաջորդ զլիսոյն մէջ (յօդ, 6), և միւսը՝ 1650ին ի կ. Պոլիս զրուած տնացուցէ մը, որ Կ'ըսէ թէ նոյն վայրկնին ժամանար հնչեցուցանեն»: Այս հնչման նպատակն էր աւելի շրեղ ընծայել հանդէսը, ոչ եթէ կոչել հաւատացեալը:

Դարձենէլ մերատրները: — Բնական է՝ որ հաւատացելոց սրտին հետ խօսող այս զործին՝ ցնցող ու փրկարար ազդեցութիւն մը գործէր երբեմն նաեւ այն պալած հոգիներուն վրայ, որոնք հեռի կ'ապրէին առաջինութենէ և ազօթավայրէն, ու զանոնք ուղղութեան առաջնորդէր: Զայս կը հաստատէ և ասոր համար Կ'ազօթէ Մաշտոցն՝ օրհնութեան վերոյիշեալ կանոնին մէջ. «Տուր, Տէր, չնորդն այսի ազգմանս այսորիկ, զի ամենեքեան որ լսիցեն ըզ-հնչուամն սորա՝ զզջասցին ի սիրտս իւրեանց ի վերայ չարեացն զործելոց, եւ զարձցին ի խորհրդոց եւ յամենայն անաւրէն բանից, եւ խնդրեացն ներուամն եւ թողութիւն մեղաց» (օր. մի. դր. մն): Բնականապէս այս իմաստով Նարեկացին ալ կը խընդուրէ որ «մոտցէ ձայնդ այդ աստուածաբեալ... հանել ի հոգւոյս զպատիրս զիւաց և զմւաս անիծից և մեղաց ապականութեան» (Ղ.Դ, բ):

Վաստացերոց օգիեկ: — Դարձեալ մի և նոյն Մաշտոցն է՝ որ Կ'աւանդէ զպս մի և նոյն տեղույն մէջ, ըսելով՝ թէ տառապեալը ի լուր ժամանարին կը յիշելին սրբավայրը, և այդ յիշատակէն յորդութուած՝ առ Աստուած Կ'ապակինէին. անոնց որ «իցեն ի վիշտս եւ յայլ նեղութիւնս», և ի ձայն կոչնակին «յիշեցնեն զեկեղեցի քո սուրբ եւ զերկապագութիւն քո զահաւոր, եւ խնդրեացն ի քէն զաւզնականութիւն», փարատէ աննոց ցաւերը: «Բանզի, կը յաւելու, սովոր ես ի ձեռն սպասուց քոյ պաշտման առնել ըստանչելիս մեծամեծն»:

Հիւանելերը թժկեկ: — Նոյն պաշտօնական ծիսարանը կը հայցէ կոչնակին վրայ շնորհը՝ ցրուելու նաեւ խօժութիւններն ու զիւական սարսափները. «զի ամենեքեան որ իցեն ի կիւանդութիւնս ախտից եւ կամ յարհաւիրս աստանայականս, եւ լսիցեն զհնչուամն սորա եւ յիշեցնեն զորդութիւն, եւ զու լուրիցն նոցակ թեթեւացուացես եւ փարատացես զամենայն ցաւս նոցա»: Այս բոլոր զժպա-

տեհութիւնը դիւաց ազգեցութենէ կը հաւամարուէին. որով կը յարէ. « Եւ այժմ շնորհեա ի ձեռն զնչմանս այսորիկ կործանի ի մէնջ ամենայն ամբութեանց թթշնամույ» : — Նարեկացին աւ նոյնը կը հաստատէ, երբ կ'աղօթէ՝ որ «Մերժեսցին սովա... ի քո մշակեալ կենդանի երկրէ (որ է մարմինը) վէրց վատնիչը և հոյլը մորմոցեցուցիչը» (ՂԴ, թ): — Մեր սրբազնան բանաստեղծը սակայն աւելի յառաջ կ'երթայ, և կ'ուզէ՝ որ ժամահարը պահապան լինի նաեւ մարմնական թերութեանց դէմ. « Կորեսցին, կ'ըսէ, սովաւ՝ յաւելուածց կրինատգեղ և անվայելուչ պատահմանց՝ ի հնարից չարին ի մեզ յայտնելոց» (անդ): Անշոշտ իւր միտրը նախապահեստ լինել էր, ոչ եթէ պատահած իւնելութիւնը բժշկել, որոյ օրինակը չեմ կարծեր թէ տեսած լինի: Վերջապէս կոչնակն իրեն համար է «կոփիչ հանապազորդեան գլխոյ զագաթան հպարտացեալ չարագործին» սատանաի (ՂԴ, թ):

Անցեր զանապահել: — Փոթորկաց շընչման ժամանակ, երբ հարուած կը սպառնարը բուսոց և պտղոց, կը հնչեցնէին ժամանակը, աղօթից հրափելով ժողովուրդը: « Յորժամ գումարեսցին, կը յարէ նոյն Մաշտոցը, ամբը ցասման, եւ լուիցեն մարդիկ զնչումն սորա, ... եւ խնդրեսցեն ի քէն զներումն յանցանաց իւրեանց եւ զպահապանութիւն անդաստանաց եւ ամենայն պտղոց», հասի՞ր անոնց օգնութեան: Բայտ նարեկացւոյն՝ նոյն ինքն կոչնակն է՝ որ իւր ձայնով կը հալածէ ու կը հեռացնէ վատնզը. « Յըրուեա վերստին, կ'ըսէ, բոյինազէն հեծանաւու՝ օժանդակեալ թեւօց նշանիդ (այս ինքն գործակցութեամբ խաչին) զամպս հրածինս, զորոտմուն կարկտարերս» : Դարձեալ կը յաւելու. «Պակասիսցին քոյզ հրամանաւ այսու քարրառով՝ հողմ տապակառն, շնչումն ցաւարեր»: Ազգեցիկ զէնք մ'է այն նաեւ մարդիի և ուրիշ վասակար մթջատաց յարձակման դէմ. « Հալեսցին հատցին և մեղին, կ'ըսէ, յերշանիկ ձայնէ օծեալս այս փայտի՝ որդն և ուտիչ և ամենայն

նմանը սոցին, որ ի մեղաց մերոց զօրացեալ ընդ մեզ պատերազմին» (ՂԴ, թ, թ):

Յուղարկուրեան մէջ: — Հին ժամանակ մեր ազնուականաց թաղման կ'ընկերէին զանազան երաժշտական զործիներ: Ասոնց Ուուրինեան թագաւորութեան անկմամբ տեղի կու տան արարական բռնութեան առջեւ, և անոնց կը յաջորդէ մեր անշուր կոչնակը, գուցէ ոչ լոկ տոնմիկ յուղարկաւորութեանց մէջ. զի գոյնէ խտրութիւն չի դներ յիշատակողը. այն է Գր. Տաթեւացին, որ նկարագրելով ընդհանուր թաղումը՝ կ'ըսէ լակոնարար. «ժամահարն յառաջ», այս ինքն կը տարովի զագաղին առջեւն (Հըց. ժ, ե): Այս առձեռն կոչնակն հաւանորէն աւելի փորբ ու թեթեւ էր քան եկեղեցւոյն ժամահարը:

Պատերազմի մէջ: — Հոյն ալ կ'երեւին մեր շարժական կոչնակները, և այն՝ շատ կանուխ, նոյն ինքն է դարին: Գայլ Վահանայ համանուն թոռն երբ կ'երթար զարնուելով Վարդուհրայ հետ, միասին տարաւ, կ'ըսէ թէ: Մամիկոնեան, 385 կրօնաւորներ, և « ընդ տասն առն ժամանար մի», որ կ'ընէ երեսունեւութ կոչնակ: Մինչդեռ կոտին մէջ վահանեանց կը տկարանային, վանականը ծնրափի աղօթեցին և « հարին զժամանարս յանդուգն », նման կ'եւտացւոց փողահարութեան երթքովի քով. յորմէ քաջախերուած զօրականց, յառաջ նետուեցան և տարին յաղթանակը (էջ 50): Նոյնպիսի դիպուածի մը կը հանդիպին նաեւ ԺԱ. զարուն. երբ Մանազկերս պաշարուած էր Տուղրիկէն, Հայոց քահանայը, կը պատմէ Արիստոսէս, « իսչիւ և ժամանարաւ բարձրածայնութեամբ ի վերայ պարապացն զԱստուած աղաչէին » (ժԶ): Թուի թէ ժամահարին այս պաշտաման կ'ակնարկէ նարեկացին՝ երբ կ'ըսէ. « Ամփոփեցաւ օծեալս ցպով հովուրդ երկնայնոյ սուր կշանանութեան մարդկային ձեռին » (ՂԴ, ե): Գուցէ այս խօսքը նշանակէ նաեւ այն աւելի փափուկ զերը՝ զոր կ'ընծայէ անոր նոյն Վարդապետը, իրեւ հաշտարար պատերազմորաց մէջ ու իսպաղութեան պահպանիչ, ըսելով այսպէս.

« կոտորեցան սուսերք սատակողին՝ այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ ի խոփս և ի մանգապս» (անդ): Ժամահարին ձայնն արթնցնելով կոռուղներու կամ խազմասիրաց տրտին մէջ աստուածային երկիւլը, կը կատէր զանոնք և խաղաղութեան սահմանին մէջ կը պահէր:

10. — Խորհուրդ կալեկինն: — Նարեկացին (Աղ. Ղ.Դ) և քան զայն աւելի Տաթեւացին (Քրզ. ձմր. Ա) շատ և տարապայման մեկնութիւններ տուած են կոչչնակին, զորս աւելորդ կը համարիմ մի առ մի յառաջ բերել: Բայց կէտ մը կայ՝ որոյ վրայ կը միարանին բոլոր մեկնիչները: Այս ինքն՝ նկատելով զայն իւր զլիաւոր պաշտաման մէջ, արթնցնելու հաւատացեալներն ու յեկեղեցի կոչելու, զայն կը խորհրդանշեն հրեշտակապետի փողոյն՝ որ վերջին օրը պիտի զարթուցանէ մեռեալները: Յովէ: Իմաստասէր այսպէս կ'ըսէ: «Ոզգարաբութիւն ժամահարին՝ զգարբիենան փողոյն ունի զօրինակ» (Էջ 109). և ուրիշ տեղ մը, «ազդարարն ժամահար... զիրեշտակական փողոյն հնչումն նշանակէ, զայն որ զարթուցանէ ի մահանանգիստ քնոյն գտիեղեցիս, և ընդ առաջ զալստեան երկնաւորն հրափրէ թագաւորի» (Էջ 139): Իրեն հետ կը ձայնակցի Նարեկացին աւ ըսելով՝ թէ անով «այժմէն ցուցեր համայն յայտնապէս զօրինակ ահեղ բարբառոյն մնձի աւուրն յարութեան» (Ղ.Դ, թ): Մի և նոյն խորհրդով կը համեմատէ զայն աւետարանի հաւախօսին, «Օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողին բան՝ հաւառն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց» (Ղ.Դ, թ): Վերջապէս Տաթեւացին ալ նոյնը կը կրկնէ: «Օրինակ է հնչումն զանգակաց՝ ձայնի փողոյն ի վերջնումն զիշերին» և այլն (Քրզ. ձմր. 8):

11. — Արգելք կոլնակին: — Օտարազգի թշնամիներ ու հարստահարիչներ, քրիստոնեայ լինէին թէ այլակըօն, շատ հաճութեամբ չէին լսեր միշտ Հայոց ժամահարին ձայնը, և չէին վարաներ երբեմն

բոլորովին խափանել զայն՝ ուր որ կարող էին, Ասողիկ կը պատմէ՝ թէ Ցյոներն 986ին «արգելին զժամաձայն Հայոց ի բաղաբին Սեբաստիոյ», որ տեսեց «մինչեւ ցզալ Թագաւորին վասլի յաշխարհն արհելից», այս ինքն է տասնուհինգ տարի: Գալով կայսրը, վերուց արգելքը, և «Հրամայեաց... հնչեցուցանել զայն ժամանակին՝ զոր արգելեալն էր մետրապոլիտն» (Գ, ի, իտ): Այսպիսի խոչընդուներէ ծագումն առաւ մեր մէջ ժամակոչը, որ արդէն կը յիշուի միշտ զարուն:

•••

Զ Ա. Ն Գ Ա. Կ .

Այս գործին նոււազ բախտաւոր եղած է քան առաջնո՞ւ նկարագրական մանրամասնութեանց կողմանէ, իւր անագան երեւմամբ՝ հայ սրտին ու գրչին մէջ չկրցաւ գրաւել այն տեղը՝ զոր բռնած էր իւր երէց ցոյրը, թէեւ օր մը պիտի յաղթէր անոր: Ինչ որ փոքր ի շատէ ծանօթ է ինձ իւր մասին, ահաւասիկ:

1. — Եղագաւինն: — Յօցուածիս սկիզբն ըսի՝ թէ Յոյները նախ թի դարուն սկսան գործածել զանգակներ, պարգեւ ընդունելով անցոմէ վենեստկոյ հանրապետութեանէն: Հետեւարար Հայք յես անոնց միայն կրնային ճանաչել զանգակը. այս ինքն՝ երբ ընդհանրացաւ անոր գործածութիւնն Յունաց մէջ: Ժ դարուն դեռ անծանօթ է այն Նարեկացւոյն, որ ամբողջ Ղ.Դ աղօթքին մէջ անոր յիշատակը չի ըներ. մանաւանդ թէ յայտնապէս կ'ըսէ՝ թէ Հայոց ժամահար գործին «ոչ (է) զանգակ նիւթոյ պղնձոյ դանգաչեցուցեալ», ինչպէս տեսանց վերեւ (յօդ. 6), ուր ցոյց տոււաւ իւր խորշումն անկից. ինչ որ չպիտի ընէր՝ եթէ զանգակը նուիրական սպասուց մէջ մասած լինէր: Նա մանաւանդ Նարեկայ վանականին արհամարհութեան մէջ աւելի բան մը կը նշմարեմ ես. քողարկեալ պայցբար մը յունական պանծասիրութեան դէմ, որ կը հպարտանար իւր

զանգակաց փայլուն հնչմամբ՝ Հայոց կոչնակին գուլ ձայնին ըով. և միանգամայն խրախոս մը Հայոց՝ փարած մեալու իրենց աւանդական փայտին:

Այսպիսի եթէ նորութիւնը որ և բան անանորժ կ'ընծայէ ի սկզբան, անոր օգուտն ու գերակշռութիւնը՝ զոր ժամանակը կը հասկացնէ՝ կ'ընտանեցնեն ու կը սիրեցնեն զայն: Այսպէս եղաւ զանգակին ալ, որ ոչ շատ ուշ՝ այն է ժի զարուն՝ արդէն ընդունուած էր մեզմէ: Ծորհալին ժամատեղաց խրատին մէջ կը յիշատակէ զայն երեք անգամ: Եսոյն կը գտնենք անոր ժամանակակից թարսեղ փարզապեսի ըով ալ (Ուսհ. ՄՌԸ): Ժի զարուն վանական վրդ. կը հաստատէ նոյնպէս անոր գործածութիւնը (Հարց.): Բաջորդ զարուն ծանօթ է այն նաեւ Գր. Ցաթեւացւոյն (Հարց. Թ, իւ): Եւ նոյն ժամանակէն մասցած զանգակներ՝ որ կան դեռ Ցաթեւոյ վանաց մէջ, պերճագոյն վկայը են անոնց ընդունելութեան:

2. — Զեր: — Եկեղեցացէն Սիմեաց պատութեան այդ նշխարները պիտի լինէին մեզ օրինակ, եթէ աւելի մանրամասն նկարագրուած լինէին: Բայց Հ. Ալիշան չի խօսիր անոնց ձեւին նկատմամբ, այլ միայն յառաջ կը բերէ անոնց վրայ զըտուած արձանագրութիւնը, որ յատուկ են զանոնց ձուլել տուող կամ զնող Արքելեան անուանի պատմչին: Անոնց երկուքն: 1302 և 1304 թուականներէն՝ աղթթական կերպարանք ունին: Մին կ'ըսէ. «Թվ. ՉնԱ. լսելի արա ինձ տէր զայն ցնութեան եւ զուրախութեան՝ անեղին ծննդեամբ. զուր Սփ. Ալինեաց զահին կոշեա ի փառազ հայրենեաց»: և միւսն է, «† Թվ. ՉնԳ. լսելի արա ինձ տէր զայն ցնութեան եւ զուրախութեան, եւ ցնծացեն ուսկերը իմ տառ. Գթա Թիփստոս Աստուած ի տէր Սփփ.»: իսկ ուրիշ ժամանակակից մը կը յաւելու անոնց ըով.

«Այս տէր Սփ. Օրպէլեանց մեծաւ ջանիւ ուղարփառ պահէ զաւանդու յեկեղեցիս Հայոց. տէր Սփփ. մետրապօլիս Ալինեաց, որ է պրոտիվրանտէս (մեծ փարզապետ) ամենայն Հայոց» (Ալիսական, 236): — Այս տեղ ուշագրաւ է և խաչքանդակը, զոր նկատեցինց ժամահարին վրայ եւս:

3. — Նիրը: — Եղած է միշտ պինձը, որ յարմարագոյն տարրն էր հնչականութեան համար: Նարեկացւոյն մէկ բացատրութեան մէջ տեսանք արդէն «զանգակ նիւթոյ պղճոյ», յորում կը տեսնենք օտարաց գործածներուն ժամանակին նկարագիրը: Նմանապէս 1321ին ի Տաթիւ գրուած մաշտոցին յիշատակարանը՝ եկեղեցւոյ ճայնատուր գործեաց մէջ կը յիշէ երկաթին ու փայտին (ժամահարին) հետ՝ «ի պղճոյ» շինուածներն ալ, (Հնդ. ամս. 1905, էջ 314), որ են նոյն ինքն զանգակները, մերերն իսկ: Գր. Ցաթացին աւելի կարեղ լմանրամասնութիւն մը կու տայ մեզ, յիշելով նաև արծաթի խանութիւն անոր զանգուածին մէջ. «զանգակն յարթարոյ և ի պղճոյ խառնեալ» (Քրզ. ձմր. 8), ինչ որ շատ աւելի կը զօրացնէր անոր ձայնը: Հայերն իրենք կը կատարէին այդ ձուլումը, թէ Յոյներէն կ'առնուին, յայտնի չէ. Բայց անհաւանական չի թուիր առաջինը, նկատելով Ցաթեւոյ զանգակաց հայերէն արձանագրութիւնը. թիւնը. թէ գժուարին չինէն նոյնը Յունաց ալ զրել տալ և կամ յետոյ փորագրել. ինչ որ ստուգելի է յիշեալ զանգակաց ցննութեամբ:

4. — Թիւր: — Սկիզբէն իսկ մեկէ աւելի կը յիշուին զանգակները: «Հնչեցուցանել զանգակական», կ'ըսէ Շնորհալին (Խրտ. ժմտղ.): Վանական վրդ. նոյնպէս յոգնակի ձեւով կը յիշէ, «զանգակը»: Եկրակոս խօսելով Հաղթատայ վանուց զանգակատան մասին, կ'ըսէ՝ թէ հն զանգական կախէին» (էջ 66): Հ. Ալիշան կը լուէ Ցաթեւոյ զանգակաց թուոյն վրայ. Բայց կարող ենց հետեցնել զայն վերոյիշեալ յիշատակարաններէն: Անոնց երկուքը սաղմուսին մի և նոյն տունը կը

1. Զանգակին այդ «ցնութեան ձայն»՝ ո՞րքափ կը զուգընթանայ ժամանարին «սփփանաց կոչման» հետ՝ զոր յեշեց նարեկացին:

րովանդակեն, և մի և նոյն անձին յիշաւակութիւնը. իսկ արդ նոյն բանը կրկնել մի զանգակի վրայ՝ անտեղի էր. ուրեմն աղոնք կ'ենթադրեն երկու զանգակները, Երրորդ յիշատակարանը կը գտնուի «առ սորօց», ըստ Հ. Ալիշանի. ուրեմն մի և նոյն անօթոց վրայ: Որով ընդ ամէնը կը լինին չոն երկու զանգակ: Նոյնը կը հաստատէ և փր. Տաթևացին՝ աւելի յայտնի կերպով յիշելով «կրկին զանկակն» (Քրզ. ձմր. 8), ինչպէս նաև «Հնչումն զանկակաց» (անդ). կամ համարելով՝ թէ Մովսէսի երկու փողերը կ'օրինակէն մեր «զերկու զանկակս» (Քրզ. թ. խ): Իսկ ուր նոյն վարդապետը կը խօսի եզակի, ինչպէս «Հնչումն ժամանարին և զանկակին» (Քրզ. ձմր. 8), կամ «մեծ ունի խորհուրդ ժամանարն և Հնչումն զանկակին» (անդ, 9), կ'ակնարկէ տեսակաց, ոչ եթէ թուոյն:

5. — Ցիկլ: — Զանազանութիւն մը կար զանգակաց ու ժամանարին զետեղման վայրին մէջ, մանրամասնութիւն մը՝ զոր կ'աւանդէ մեզ Տաթևացին: «Ի բարձր տեղուցէ է զանկակն կափեալ», կ'ըսէ նա, ակնարկելով զանգակատան՝ զոր կը կառուցանէին կամ առանձինն ու բարձր, և կամ եկեղեցւոյ գալթին տանեաց վրայ, և չուանով մը կը շարժէին վարէն զանգակը: Իսկ «ժամանարն... ի դրուն եկեղեցւոյն» կը կախուէր և կամ կը զարնուէր ճեռամբարձ (անդ, 9):

6. — Պատունի: — Հազիւ ընդունուած հայ եկեղեցւոյ մէջ, կը բաժնէ և իրեն կ'առնու կոչնակին պաշտաման մէկ մասը, նոյն իսկ այնուհետև սակաւ գործ թողլով իւր նախորդին, ինչ որ բնական էր՝ նկատելով իւր առաւելութիւնը քան զայն: Արդ՝ իրեն ալ առաջին գործը կը լինի:

Ժամանակուրեսան կոչել: — Ն. Շնորհալին խօսելով գիշերային ժամասացութեան մասն, կ'աւանդէ «Հնչեցուցաննել զգանկակնեն կամ ժմամանարսն» (Խր. ժմուղ.), Այս տեղ տակաւին որոշ և ուրոյն գեր մը չունին անոնք, այլ ըստ հաճոյս է միոյն կամ միւսին գործածութիւնը: Իսկ օրուան-

յաջորդ ժամերգութեան, որ է ճաշուն, նախամեծարութիւնը կու տայ զանգակին, սահմանելով այսպէս. «Եալի երեց անզամ հարկանեն զգանկակին, և հարկանեն զիտյատամանարին զենի ըստ հնոյն». ուր կը ցուցնէ երկրորդին երբեմն ունեցած և այժմ նուազած գերը, զոր կը պահէ ի յարգանս անցելոյն յիշատակին: Իսկ երեկոյին սարուղովին լոռոթեան կը դաստապարտուի, և փակակալը «հարկանէ զգանկակին» միայն: Բաց ասոր՝ առաւոտուն և երեկոյին կը հնչեն երկու զանգակները. իսկ ճաշուն՝ մին միայն:

Սիհնեցից նոր կարգադրութիւն մը կ'ըսնն, որ շատ կը տարբերի նախորդէն և աւելի գեղեցիկ է: Սիհնեցից կ'ըսեմ, որովհետեւ յիշատակողը Տաթևացին է. թէն այդ չի մերժե՞ որ աւելի ընդհանուր լինէր սովորութիւնը: Արդ կը պատմէ նա՝ թէ կաշնակն ամենորեայ գործածական էր իւր ժամանակ. իսկ զանգակը յատկացուած էր լոկ տօնից: Նման Հրէից տօնական փողին, կ'ըսէ, «և մեր ի տարեմուս և ի տօնս զիմաստը հնչեմք զզանկակն». և նոյն կը կրկնէ այսպէս. «Հնչումն զանկակացն ի տօնս տէրումականս և յերեւելիս», ինչպէս «առաքելոց» (Քրզ. ձմր. 8): — Այդ առիթներուն ալ՝ զիշերային հարուածով կրկին պաշտօն կը վարէր զանգակը նման կոչնակին, զարթուցչի և կոչողի. «զարթուցանէ ի բնոյ և կոչէ ի տօնս և ի տեղի աղօթից ըստ նոյնին (Հրէից) նմանութեան» (անդ): — Այդ օրերուն ալ սակայն կոչնակն անզործ չէր մնար. այլ «ժամանարն նախ հարկանէ ի դրունս եկեղեցւոյն, և ապա ի հեռաւորսն» զանգակն (անդ, 9):

Պատարագի մէջ: — Զայս յիշատակողն է Տաթևացին, որ նկարագրելով ընծայից հանդիսական վերաբերութիւնը, կ'ըսէ՝ թէ նոյն պահուն «զանկակ հնչեն» (Քրզ. ձմր. 477), և ուր կը տեսնենք՝ որ Կոչնակն այդ զարուն և կամ Ալինեաց մէջ տեղի տուած է զանգակին, թէն առանց արտաքսուելու սովորութենէն նաև այնուհետեւ:

Յուղարկման պահուն: — Եթէ կոչնակը դագաղին կ'ընկերէք, ինչպէս տեսանց, մի և նոյն ժամանակ զանգակն ալ կը հնչէք զանգակատան ծայրէն, հոչակելով սպալի դէպքն ամենուն: Զայս կ'աւանդէ Բարսեղ վրդ. Ժի դարուն, երբ կ'ողբայ Պատոխն իշխանի մահը պատերազմի մէջ, որով զրկեցաւ յուղարկաւորութեան պատիւներէ, և «ոչ զանգակ նմա ոչ (՞ց) հնչեցոյց» (Աւոհ. ՄԾԲ): Մհծամեծաց միայն կը լինէր այս, թէ բոլոր հաւատացելոց, յայտնի չէ:

Թարորի մէջ: — Առաքել Դաւրիմեցի կը պատմէ թէ երբ Շահարաս յԱգուլիս կը մտնէր, իրեն ընդ առաջ ելան քահանայք և պաշտօնհայք՝ ամրող եկեղեցական կազմածներով ու սպասութ, որոց մէջ «և զանգակօր» (Իէ), կրօնական թարոր մ'է այդ ըստ նկարազբին, յորում կը մտնեն զանգակները, ի հարկէ առձեռն ու թեթեւ, ինչպէս երբեմ կոչնակներն էին: Եւ չենք կարող երեւակայել՝ թէ մեր այդ եկեղեցականութիւնն 1617ին առաջին անգամ կը գործածէր զանոնք այդպիսի առթիւ մը. այլ անշուշտ աւելի հին սովորութեան մ'արդիւնքն էր այդ:

Հ. Վարդակ Հատուճ

ԿԱՐԴԻՆԱԼ ԲՈՆԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Տարւոյս ընթացքին մէջ Տորինոյ քաղաքը կը պատրաստուի շքեզօրէն տօնելու գիտութեամբ և բարեպաշտութեամբ հռչակաւոր կարգինալ ձիվովաննի Բոնայի եւ բերնարդիւրամեակը:

Այս մեծահամբաւ իտալացի կարդինալը ծնած է Պիէմոնդի Մոնդովի քաղաքին մէջ 1609 տարւոյն, ազնուական ընտանիքէ: Հետևելով իւր ծնողին ընդունած զաստիարակութեան բարեպաշտ սկզբունքներուն՝ թարմ պատանեկութենէն սկսեալ ինքինը նուիրեց եկեղեցական վիճակի,

անդամակցեցաւ կիստերսականաց կարգին, որոց ընդհանրական Արքայ ընդորւեցաւ 1651ին: Եթեոյ Աղեքսանդր Ռիմերորդ Քահանայապետէն Հոռվմ Հրավիրուելով՝ հոն կարեոր պաշտօններու վրայ դրտեցաւ: Վերոյիշեալ Պապին յաջորդը կղեմէս թ. զինը կարգինալ ըրաւ 1667ին: Վերջնոյս մահուանէն վերջը՝ շատերը ծանօթ ըլլալով կարդ. Բոնայի սրբակեաց վարքին և խոր գիտութեան և զրծունակաց կենաց՝ կը փափարկէին զինը Ս. Պետրոսի Գահին վրայ տեսնել:

Իւր պաշտօնանց ծանրագոյն և խուռն զրծերը արգելք մը չեղան իւր գրաւոր աշխատութեանց, որոց ցանկն հետևեալն է, մեծացիր հատորի մը մէջ ամփոփուած, լատին լեզուով.

1. Առաջնորդ Երկեխ (Manuductio ad Cœlum).

2. Ակդրումք և Առողջմումք քրիստոնեական կիսաց (Principia et documenta vitae christianaæ).

3. Համառու համապարև առ Աստուած (Via compendii ad Deum).

4. Ճառ հայեցողական ի վերայ Ս. Պատարացին (Tractatus asceticus de Sacrificio Missae).

5. Յաղագու բնորոշուրկան հոգոց (De discrezione spirituum).

6. Յաղագու ծխական իրաց (De rebus liturgicis).

7. Յաղագու աստամային սադիմսերութեանց (De divina psalmodia).

8. Կոսկ Հնդիկակին (Testamentum Auctoris).

9. Հոգեւորական ժամացոյց (Horologium asceticum).

10. Պատրաստուրիմ մահան (De praeparatione ad mortem).

Բոնայի գործոց յարգը կը կազմեն՝ անոնց մէջ բովանդակուած բարեպաշտ հոգուոյն հետ նաև խորին գիտութիւնը, մասնաւորապէս ծիսական և եկեղեցական և աստուածարանական իրաց մէջ, ներքին այս յարգին վրայ մեծապէս փայլ մ'ալ